ի յՈւսկուտարն ուղևորել զԵղիազար վարդապետն, և գնացաք ի չայիրն որ հանդէպ Քաղկեդոնի, նստեալ անդ կերաք զհացն. ել և աւրհնեաց զքաղաքս և զմեզ. և հեծեալ ի ջորին իւր՝ ել և գնաց իւրայնոքն հանդերձ։

Եւ յետ աւուրց ինչ կաթողիկոսն ի Սուրբ Նիկողայոս եկեղեցին Ոհան վարդապետին մեծի և Ներսէս վարդապետին՝ առաջնորդին Տաթևոյ և Ովանէս Մուղնեցոյն Գ վարդապետիս գաւազան տվաւ։

Եւ յաւուրքս Եղիազար վարդապետի աշակերտ Իգնատիոս վարդապետն եկեալ ի Կաֆայու, որ էառ վարդապետն զնուիրակութիւն և զաշակերտն ուղարկեաց և այժմ եկն բազում ընծայիւ և զհետ բերեալ էր մի պատուական սնտուկ, որ կոչի փէշթահտա սատաֆքեարի, զայն Եղիազար վարդապետն ուղարկեաց աշակերտաւն իւրով ընծայ կաթողիկոսին, որ էր ի Սուրբ Նիկողոս, և նա յոյժ ուրախութեամբ ընծայեաց զնորին աշակերտն։

Եւ յետ բանիցս զՈհան վարդապետն փոխեցին և զՆերսէս վարդապետն եդին առաջնորդ, և նա ևս ոչ կամօք զայս արար Մուղնեցի Ովանէս վարդապետն թէ իմ վերայ հանգչի առաջնորդութիւնն, և նա ևս ձգեաց և Ե Զ օր Յակոբ Տիրացու խազնատարին վերայ կեցաւ, և անտի առեալ ետուն զմօհրն և զառաջնորդութիւն Յովանէս վարդապետին Մուղնեցոյ։

Եւ Հոկտեմբերի ԼԱ-ին օր Կիրակի ի Սուրբ Հրեշտակապետ եկեղեցին կաթողիկոսն եպիսկոպոս մի ձեռնադրեաց Պուղտանցի։

Եւ յետ աւուրց ինչ զՄեծ Ոհան վարդապետն ի Լեհ ուղարկեաց կոնդակով և աւրհնութեամբ նուիրակ։

Նոյեմբեր ամիս օր Բչի։

Թ-ին օր Գչի. երեկոյին որ Դչի լուսանայր, երոցք եղև անկեալ ի նոր Պէզէստանի դիմացէն և ի